КԱՊԻՏԱԼ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ԱՔ-ՀԲՄԱՇՁԲ-20/1

ք. Արմավիր «28» հուլիսի 2020թ.

Արմավիրի համայնքապետարանը ի դեմս համայնքի ղեկավար Դ. Խուդաթյանի, որը գործում է Արմավիրի համայնքապետարանի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Վահագն և Սամվել» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն՝ Սարգիս Ալոյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա (այսուհետ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված Արմավիրի մարզի Արմավիր քաղաքի Աբովյան 139 բ/բ շենքից Բաղրամյան 25 բ/բ շենքերի միջև գտնվող միջբակային ճանապարհի և բակային տարածքի բարեկարգման աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ 150 օրացուցային օր:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Հրավիրել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագրին օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքների առնվազն 75 տոկոսը կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 365 օր: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.11 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն դաշտերը, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նաև իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքները:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումը ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրության ստորագրումը Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ սահմանվելու վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 110820826 (մեկ հարյուր տասը միլիոն ութ հարյուր քսան հազար ութ հարյուր քսանվեց) ՀՀ դրամ, որից 18470138 (տասնութ միլիոն չորս հարյուր յոթանասուն հազար մեկ հարյուր երեսունութ) ՀՀ դրամը` ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը, ընդ որում`

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված` առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների` պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ` դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է համաձայն ընդունման արձանագրության հիման վրա` պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ` կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0.05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք` պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0.5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ` վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0.05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունների կատարումից:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորությունների ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը` այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած` կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած` հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ` համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.8 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը` Կապալառուի առաջարկության առկայության դեպքում` պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով և սկզբունքներով աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողությունները) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի` երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները` ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ բացառությամբ` Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի` պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում` նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված` ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը սույն կետով հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

8.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Սույն պայմանագիրը կազմված է 16 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.15 Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի

կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի տասնապատիկը, ապա Պատվիրատուի կողմից համաձայնագիր կկնքվի. եթե Կապալառուի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինվում են բանկային երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 17-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները: Ընդ որում, Կապալառուն համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

## 9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Արմավիրի համայնքապետարան
Ք. Արմավիր, Հանրապետության 32
ՀՀ Ֆինանսների նախարարություն
Հ/Հ 900332371039
ՀՎՀՀ 04401882

Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«Վահագն և Սամվել» ՍՊԸ
ՀՀ, ք.Երևան , Շիրակի 47/3
Բանկ ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ ՓԲԸ
Հ/Հ [illegible]
ՀՎՀՀ 01529053

Կ.Տ.

Հավելված թիվ 1
,28 հուլիսի 2020թ․ կնքված
ԱՔ-ՀԲՄԱՇՁԲ-20/1 ծածկագրով պայմանագրի

# ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ*

Արմավիրի մարզի Արմավիր քաղաքի Աբովյան 139 բ/բ շենքից Բաղրամյան 25 բ/բ շենքերի միջև գտնվող միջբակային ճանապարհի և բակային տարածքի բարեկարգման աշխատանքներ

| ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ* | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| *Արմավիրի մարզի Արմավիր քաղաքի Աբովյան 139 բ/բ շենքից Բաղրամյան 25 բ/բ շենքերի միջև գտնվող միջբակային ճանապարհի և բակային տարածքի բարեկարգում* | | | | | | |
| | | | | | | |
| | | | | | | |
| NN | գնի հիմք | Աշխատանքի նկարագիրը | Չ/մ | Քանակ | Միավ գինը հազար դրամ | Ընդամենը հազար դրամ |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 |
| | | *քանդման աշխատանքներ* | | | | |
| 1 | 27-36 | բազալտե եզրաքարերի ապամոնտաժում բետոնե հիմքի հետ միասին /300*150 մմ/ մեխանիզմով | մ | 76,00 | 0,30 | 22,80 |
| 2 | 27-36 | բետոնե եզրաքարերի ապամոնտաժում բետոնե հիմքի հետ միասին մեխանիզմով | մ | 1 020,00 | 0,30 | 306,00 |
| 3 | 27-33 | Ա/բետոնե ծածկույթի քանդում մեխանիզմով | $մ^3$ | 32,00 | 1,00 | 32,00 |
| 4 | 46-99 գ-0,5 | Բետոնե սալվածքի քանդում մեխանիզմով | $մ^3$ | 12,00 | 1,00 | 12,00 |
| 5 | 46-99 | մայթերի բազալտե սալիկների քանդում մեխանիզմով բետոնե նախաշերտի հետ միասին | $մ^3$ | 10,00 | 1,00 | 10,00 |
| 6 | 46-99 | մայթերի կերամիկական սալիկների քանդում մեխանիզմով բետոնե նախաշերտի հետ միասին | $մ^3$ | 2,00 | 1,00 | 2,00 |
| 7 | 7-241 գ-0.4 | Հավաքովի Ե/Բ դիտահո-րերի կափարիչների ապամոնտաժում 1200*1200մմ | հատ | 38,00 | 5,00 | 190,00 |
| 8 | 1-1612 | ճանապարհային պաշտակի համար բնահողի կտրում մեխանիզմով | $1000մ^3$ | 1,25 | 1 400,00 | 1 750,00 |
| 9 | 1-1551 | ջրահեռացման վաքերի տեղադրման և մայթերի հատվածներում բնահողի քանդում մեխանիզմով | $1000մ^3$ | 0,20 | 1 400,00 | 284,20 |
| 10 | 1-961 | բնահողի քանդում ձեռքով | $մ^3$ | 21,00 | 1,40 | 29,40 |
| 11 | 1-1635 | լիցքի իրականացում մայթերի հատվածում քանդած բնահողից մեխանիզմով | $1000մ^3$ | 0,20 | 1 400,00 | 280,00 |
| 12 | 1-968 | լիցքի իրականացում մայթերի հատվածում քանդած բնահողից ձեռքով | $մ^3$ | 20,00 | 1,40 | 28,00 |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 13 | 1-1592 | քանդված բնահողի բարձում ա/ինքնաթափին էքսկավատորով | 1000մ$^3$ | 1,00 | 600,00 | 600,00 |
| 14 | Գ-130-3 | քանդված բնահողի տեղափոխում ավտո-ինքնաթափով 3կմ հեռ. | տն | 1 881,00 | 1,00 | 1 881,00 |
| 15 | 1-1592 | քանդված ա/բետոնի բարձում ա/ինքնաթափին էքսկավատորով | 1000մ$^3$ | 0,03 | 600,00 | 19,20 |
| 16 | Գ-130-3 | քանդված ա/բետոնի տեղափոխում ավտո-ինքնաթափով 3կմ հեռ. | տն | 64,00 | 1,00 | 64,00 |
| 17 | 1-1592 | շին աղբի բարձում ա/ինքնաթափին էքսկավատորով | 1000մ$^3$ | 0,06 | 600,00 | 36,00 |
| 18 | Գ-130-5 | շին աղբի տեղափոխում ավտո-ինքնաթափով 3կմ հեռ. | տն | 109,80 | 1,00 | 109,80 |
| | | ԸՆԴԱՄԵՆԸ | | | | 5 657,00 |
| | | ՏԵՍԱԿԱՐԱՐ ԿՇԻՌ | | | | 6,13 |
| | | *կառուցման աշխատանքներ* | | | | |
| 1 | 16-70 | բետոնե եզրաքարերի տեղադրում 300x150մմ բետոնե հիմքի վրա | 100 գծմ | 14,68 | 700,00 | 10 276,00 |
| 2 | 6-126 | միաձույլ բետոնե եզրաքարերի կառուցում ա/բետոնե ծածկույթի եզրերով ,200*150մմ չափերով/916մ/ | մ$^3$ | 27,48 | 100,00 | 2 748,00 |
| 3 | 27-87 | բազալտե եզրաքարերի տեղադրում բետոնե հիմքի վրա /300x150մմ / | 100 գծմ | 0,72 | 1 000,00 | 720,00 |
| 4 | 16-76 | հավաքովի բետոնե եզրաքա-րերի տեղադրում 200 x 60մմ բետոնե հիմքի վրա/ծառերի շուրջ/ | 100 գծմ | 0,18 | 600,00 | 108,00 |
| 5 | 1-958 | սևահողի փռում ծառերի տնկման հատվածում | մ$^3$ | 1 | 50,00 | 50,00 |
| 6 | 23-109 | Հավաքովի ն/բդիտահորերի կափարիչների տեղադրում օգտագործելով ապամոնտաժվածը /33 հատ/ | մ$^3$ | 9,5 | 75,00 | 712,50 |
| 7 | 23-109 | Հավաքովի ն/բ նոր դիտահորերի կափարիչների տեղադրում 1200x1200մմ | մ$^3$ | 1,44 | 25,00 | 36,00 |
| 8 | Շուկա | Հավաքովի ն/բ կափարիչի արժեքը 1200x1200, թուջե մտոցի հետ | հատ | 5 | 185,00 | 925,00 |
| 9 | 27-20 | մայթի հատվածում ավազակոպճային նախաշերտի իրականացում 100մմ /340մ2/ | մ$^3$ | 0 | 6,00 | 0,00 |
| 10 | 27-22-1 | մայթի հատվածում խճային նախաշերտի իրականացում 80մմ /3348մ2/ | մ$^3$ | 267,84 | 7,00 | 1 874,88 |
| 11 | 16-82 | մայթի հատվածում ասֆալտաբետոնե ծածկույթի իրականացում ,,Դ,, տիպի ա/բետոնե ծածկույթով 30մմ հաստ, | 100մ$^2$ | 33,48 | 300,00 | 10 044,00 |
| 12 | 27-144 | ճանապարհի խճային հիմք 12սմ բիտումի ներծծումով 4.12կգ/մ2 | 100մ$^2$ | 73,3 | 200,00 | 14 660,00 |
| 13 | 27-164-2<br>27-165-2 | «Բ» տիպի մանրահատիկ ա/բետոնե ծածկույթի իրականացում խճային հիմքի վրայից/հաստ.-50մմ | 100մ$^2$ | 73,3 | 480,00 | 35 184,00 |
| | | ԸՆԴԱՄԵՆԸ | | | | 77 338,38 |
| | | ՏԵՍԱԿԱՐԱՐ ԿՇԻՌ | | | | 83,74 |
| | | *Ջրահեռացման վաքեր* | | | | |
| 1 | 23-1 | նախապատրաստական շերտի իրականացում ավազակոպիճից ե/բ վաքերի տակ 100մմ հաստ. | մ$^3$ | 8,4 | 6,00 | 50,40 |
| 2 | 7-723 | հավաքովի ն/բ վաքերի տեղադրում/ 128գծմ/ 400*340 մմ չափի , | մ$^3$ | 6,4 | 80,00 | 512,00 |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 3 | շուկա | հավաքովի ե/բ վաքերի արժեքը 128/3=43հատ | հատ | 43 | 40,00 | 1 720,00 |
| 4 | Շուկա | թուջե ճաղավանդակների տեղադրում ջրընդունիչների վրա 500x500մմ չափերի | հատ | 20 | 55,00 | 1 100,00 |
| 5 | 30-7 | վաքերի գլխամասի բետոնացում B-15մ.բ. | մ$^{3}$ | 1 | 50,00 | 50,00 |
| | | ԸՆԴԱՄԵՆԸ | | | | 3 432,40 |
| | | ՏԵՍԱԿԱՐԱՐ ԿՇԻՌ | | | | 3,72 |
| | | *Տիպ 1 ջրահեռացման համակարգ* | | | | |
| 1 | Շուկա | թուջե ճաղավանդակների տեղադրում ջրընդունիչների վրա 500x500մմ չափերի | հատ | 4 | 55,00 | 220,00 |
| 2 | 1-1551 | 3-րդ կարգի բնահողի մշակում մեխանիզմով | 1000մ$^{3}$ | 0,004 | 1 500,00 | 6,00 |
| 3 | 1-961 | բնահողի քանդում ձեռքով | մ$^{3}$ | 4 | 1,50 | 6,00 |
| 4 | 6-126 | ճաղավանդակների կողային հատվածների բետոնացում 100*70մմ B - 15բետոնով | մ$^{3}$ | 0,4 | 50,00 | 20,00 |
| 5 | 5-67 | խճային նախաշերտ դիտահորի տակ 100մմ | մ$^{3}$ | 0,6 | 7,00 | 4,20 |
| 6 | 11-11 | բետոնե նախաշերտի կառուցում B-7,5մ.բ.100մմ հաստ. | մ$^{3}$ | 0,44 | 50,00 | 22,00 |
| 7 | 23-109 | Հավաքովի ե/բ դիտահորերի տեղադրում 760*760*680մմ | մ$^{3}$ | 1,2 | 100,00 | 120,00 |
| 8 | Շուկա | Հավաքովի ե/բ դիտահորերի արժեքը 760*760*680մմ | հատ | 4 | 60,00 | 240,00 |
| 9 | 8-27 | դիտահորի պատերի ջրամեկուսացում բիտումային մածիկի քսումով 2 անգամ | 100մ$^{2}$ | 0,08 | 180,00 | 14,40 |
| 10 | 27-125 | անցումների հատվածներում ա/բետոնե ծածկույթի կտրում մեխանիկական եղանակով | 100մ | 2,24 | 20,00 | 44,80 |
| 11 | 46-99 | նույն հատվածների բետոնի քանդում ձեռքով | մ$^{3}$ | 6 | 25,00 | 150,00 |
| 12 | 1-961 | բնահողի քանդում ձեռքով | մ$^{3}$ | 16 | 1,40 | 22,40 |
| 13 | 23-1 | խողովակների հիմնատակի կառուցում ավազակոպիճով 100մմ | մ$^{3}$ | 4,8 | 6,00 | 28,80 |
| 14 | 22-93 | պողպատե խողովակների մոնտաժում Φ273*4մմ | գծմ | 112 | 21,25 | 2 380,00 |
| 15 | 22-79 | պողպատե խողովակի ջրամեկուսացում բիտումային մածիկով 2 անգամ | 100մ$^{2}$ | 0,96 | 180,00 | 172,80 |
| 16 | 27-164-2<br>27-165-2 | խողովակների վրա «Գ» տիպի ա/բետոնե ծածկույթի իրականացում /30մմ/ | 100մ$^{2}$ | 0,68 | 300,00 | 204,00 |
| 17 | 30-7 | խողովակների գլխամասի բետոնացում B-15մ.բ. | մ$^{3}$ | 0,8 | 50,00 | 40,00 |
| 18 | 1-968 | բնահողի հետլիցք ձեռքով | մ$^{3}$ | 16 | 1,40 | 22,40 |
| 19 | 1-1592 | քանդված բնահողի բարձում ա/ինքնաթափին էքսկավատորով | 1000մ$^{3}$ | 0,0192 | 600,00 | 11,52 |
| 20 | Գ-130-3 | քանդված բնահողի տեղափոխում ավտո-ինքնաթափով 3կմ հեռ. | տն | 28,8 | 1,00 | 28,80 |
| 21 | 1-1592 | շին. աղբի բարձում ա/ինքնաթափին էքսկավատորով | 1000մ$^{3}$ | 0,0192 | 600,00 | 11,52 |
| 22 | Գ-130-3 | շին. աղբի տեղափոխում ավտո-ինքնաթափով 3կմ հեռ. | տն | 34,6 | 1,00 | 34,60 |
| | | ԸՆԴԱՄԵՆԸ | | | | 3 804,24 |
| | | ՏԵՍԱԿԱՐԱՐ ԿՇԻՌ | | | | 4,12 |
| | | *Տիպ 2 ջրահեռացման համակարգ* | | | | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | Շուկա | թուջե ճաղավանդակների տեղադրում ջրընդունիչների վրա 500x500մմ չափերի | հատ | 2 | 55,00 | 110,00 |
| 2 | 1-1551 | 3-րդ կարգի բնահողի մշակում մեխանիզմով | 1000մ$^3$ | 0,012 | 1 400,00 | 16,80 |
| 3 | 1-961 | բնահողի քանդում ձեռքով | մ$^3$ | 2 | 1,40 | 2,80 |
| 4 | 6-126 | ճաղավանդակների կողային հատվածների բետոնացում 100*70մմ B - 15բետոնով | մ$^3$ | 0,2 | 50,00 | 10,00 |
| 5 | 5-67 | խճային նախաշերտ դիտահորի տակ 100մմ | մ$^3$ | 0,3 | 7,00 | 2,10 |
| 6 | 11-11 | բետոնե նախաշերտի կառուցում B-7,5մ.բ 100մմ հաստ. | մ$^3$ | 0,22 | 50,00 | 11,00 |
| 7 | 23-109 | Հավաքովի ե/բ դիտահորերի տեղադրում 760*760*680մմ | մ$^3$ | 0,6 | 100,00 | 60,00 |
| 8 | 23-109 | Հավաքովի ե/բ դիտահորերի արժեքը 760*760*680մմ | հատ | 2 | 60,00 | 120,00 |
| 9 | 8-27 | դիտահորի պատերի ջրամեկուսացում բիտումային մածիկի քսումով 2 անգամ | 100մ$^2$ | 0,04 | 180,00 | 7,20 |
| 10 | 27-125 | մայթի հատվածում ա/բետոնե ծածկույթի կտրում մեխանիկական եղանակով | 100մ | 0,2 | 20,00 | 4,00 |
| 11 | 27-33 | նույն հատվածի ա/բետոնե ծածկույթի քանդում | մ$^3$ | 0,4 | 1,00 | 0,40 |
| 12 | 1-961 | բնահողի քանդում ձեռքով | մ$^3$ | 2 | 1,40 | 2,80 |
| 13 | 23-1 | խողովակների հիմնատակի կառուցում ավազակոպիճով 100մմ | մ$^3$ | 0,4 | 6,00 | 2,40 |
| 14 | 22-93 | պողպատե խողովակների մոնտաժում Փ273*4մմ | գմ | 8 | 21,25 | 170,00 |
| 15 | 22-79 | պողպատե խողովակի ջրամեկուսացում բիտումային մածիկով 2 անգամ | 100մ$^2$ | 0,08 | 180,00 | 14,40 |
| 16 | 27-22-1 | Խճի նախաշերտի կառուցում 4մ2 (հաստ.-60մմ) | մ$^3$ | 0,024 | 7,00 | 0,17 |
| 17 | 27-164-2<br>27-165-2 | խողովակների վրա «Դ» տիպի ա/բետոնե ծածկույթի իրականացում /30մմ/ | 100մ$^2$ | 0,04 | 300,00 | 12,00 |
| 18 | 30-7 | խողովակների գլխամասի բետոնացում B-15մ.բ | մ$^3$ | 0,2 | 50,00 | 10,00 |
| 19 | 1-968 | բնահողի հետլիցք ձեռքով | մ$^3$ | 4 | 1,40 | 5,60 |
| 20 | 1-1592 | քանդված բնահողի բարձում ա/ինքնաթափին էքսկավատորով | 1000մ$^3$ | 0,012 | 600,00 | 7,20 |
| 21 | Գ-130-1 | քանդված բնահողի տեղափոխում ավտոինքնաթափով 3կմ հեռ. | տն | 18 | 1,00 | 18,00 |
| 22 | 23-229 գ-1,12 | քանդված ա/բետոնի բարձում ա/ինքնաթափին ձեռքով | տն | 0,8 | 1,00 | 0,80 |
| 23 | Գ-130-3 | քանդված ա/բետոնի տեղափոխում ավտոինքնաթափով 3կմ հեռ. | տն | 0,8 | 1,00 | 0,80 |
| | | ԸՆԴԱՄԵՆԸ | | | | 588,47 |
| | | ՏԵՍԱԿԱՐԱՐ ԿՇԻՌ | | | | 0,64 |
| | | *Տիպ 3 ջրահեռացման համակարգ* | | | | |
| 1 | Շուկա | թուջե ճաղավանդակների տեղադրում ջրընդունիչների վրա 500x500մմ չափերի | հատ | 2 | 55,00 | 110,00 |
| 2 | 1-1551 | 3-րդ կարգի բնահողի մշակում մեխանիզմով | 1000մ$^3$ | 0,012 | 1 400,00 | 16,80 |
| 3 | 1-961 | բնահողի քանդում ձեռքով | մ$^3$ | 2 | 1,40 | 2,80 |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 4 | 6-126 | ճաղավանդակների կողային հատվածների բետոնացում 100*70մմ B -15բետոնով | մ$^3$ | 0,2 | 50,00 | 10,00 |
| 5 | 5-67 | խճային նախաշերտ դիտահորի տակ 100մմ | մ$^3$ | 0,3 | 7,00 | 2,10 |
| 6 | 11-11 | բետոնե նախաշերտի կառուցում B-7,5մ ք 100մմ հաստ. | մ$^3$ | 0,22 | 50,00 | 11,00 |
| 7 | 23-109 | Հավաքովի ե/բ դիտահորերի տեղադրում 760*760*680մմ | մ$^3$ | 0,8 | 100,00 | 80,00 |
| 8 | Շուկա | Հավաքովի ե/բ դիտահորերի արժեքը 760*760*680մմ | հատ | 3 | 60,00 | 180,00 |
| 9 | 23-1 | Խողովակների հիմնատակի կառուցում ավազակոպիճով 100մմ | մ$^3$ | 0,6 | 6,00 | 3,60 |
| 10 | 22-93 | պողպատե խողովակների մոնտաժում Φ273*4մմ | գծմ | 10 | 21,25 | 212,50 |
| 11 | 22-79 | պողպատե խողովակի ջրամեկուսացում բիտումային մածիկով 2 անգամ | 100մ$^2$ | 0,1 | 180,00 | 18,00 |
| 12 | 23-109 | ցամաքուրդի /դրենաժ / հավաքովի ե/բ դիտահորերի տեղադրում Φ1500մմ,L-1000մմ/ | մ$^3$ | 4,4 | 20,00 | 88,00 |
| 13 | Շուկա | Հավաքովի ե/բ դիտահորերի արժեքը Φ1500մմ,L-1000մմ/ | հատ | 4 | 66,00 | 264,00 |
| 14 | Շուկա | Հավաքովի ե/բ դիտահորերի ծածկի սալ 1800*1800մմ | հատ | 2 | 220,00 | 440,00 |
| 15 | 6-126 | բետոնե հիմքերի իրականացում դիտահորի պատերի պարագծով B -15բետոնով | մ$^3$ | 0,6 | 50,00 | 30,00 |
| 16 | 8-27 | դիտահորի պատերի ջրամեկուսացում բիտումային մածիկի քսումով 2 անգամ | 100մ$^2$ | 0,2 | 180,00 | 36,00 |
| 17 | 5-67 | խճի շերտ/ 40-70 /մմ, 300մմ հաստ | մ$^3$ | 0,6 | 7,00 | 4,20 |
| 18 | 1-968 | բնահողի հետլիցք ձեռքով | մ$^3$ | 5 | 1,40 | 7,00 |
| 19 | 1-1592 | քանդված բնահողի բարձում ա/ինքնաթափին էքսկավատորով | 1000մ$^3$ | 0,006 | 600,00 | 3,60 |
| 20 | Գ-130-3 | քանդված բնահողի տեղափոխում ավտոինքնաթափով 3կմ հեռ. | տն | 9 | 1,00 | 9,00 |
| 21 | 23-229 գ-1,12 | քանդված ա/բետոնի բարձում ա/ինքնաթափին ձեռքով | տն | 0,8 | 1,00 | 0,80 |
| 22 | Գ-130-3 | քանդված ա/բետոնի տեղափոխում ավտոինքնաթափով 3կմ հեռ. | տն | 0,8 | 1,00 | 0,80 |
| | | ԸՆԴԱՄԵՆԸ | | | | 1 530,20 |
| | | ՏԵՍԱԿԱՐԱՐ ԿՇԻՌ | | | | 1,66 |
| | | *Ընդամենը* | | | | *92 350,688* |
| | | *ԱԱՀ 20%* | | | | *18 470,138* |
| | | *Ընդամենը* | | | | *110 820,826* |
| | | ՏԵՍԱԿԱՐԱՐ ԿՇԻՌ | | | | *100,00* |

Վահագն և Մանվել ՍՊԸ -ի գործադիր տնօրեն՝ Սարգիս Արդյան

[illegible] ստորագրությունը

| Աշխատանքների կատարման նախահաշվային արժեքը կազմում է 110 820 826,00 ՀՀ դրամ ներառյալ ԱԱՀ-ն: | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | |
| | | | | | | |
| * Կապալառուն աշխատանքները կատարում է ք. Արմավիր համայնքում: | | | | | | |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

Արմավիրի համայնքապետարան
ք. Արմավիր, Հանրապետության 32
ՀՀ ֆինանսների նախարարություն
Հ/Հ 900332371039
ՀՎՀՀ 04401882

Ղեկավարություն/
Ա.Տ.

**ԿԱՊԱԼԱՌՈՒ**

Վահագն և Սամվել ՍՊԸ
ՀՀ, ք Երևան , Շիրակի 47/3
Բանկ՝ ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ ՓԲԸ
Հ/Հ [illegible]5035
ՀՎՀՀ 01528053

Ղեկավարություն/
Ա.Տ.

*Հավելված թիվ 2*
*28 հուլիսի 2020թ. կնքված*
*ԱՔ-ՀԲՄԱՇՁԲ-20/1 ծածկագրով պայմանագրի*

**ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ**
**ՆԱԻՐԻԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՇԵՆՔԻ ՍԱԼԱՀԱՏԱԿՄԱՆ և ԱՍՖԱԼՏԱՊԱՏՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ**

| N ը/կ | Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ | Աշխատանքների կատարման ժամկետը** | |
|---|---|---|---|
| | | Սկիզբը | Ավարտը |
| 1 | Արմավիրի մարզի Արմավիր քաղաքի Աբովյան 139 բ/բ շենքից Բաղրամյան 25 բ/բ շենքերի միջև գտնվող միջբակային ճանապարհի և բակային | ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև սկսվող | 150 օրացուցային օր |

| | | | |
|---|---|---|---|
| | տարածքի բարեկարգման աշխատանքներ | համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից: | |
| ԸՆԴԱՄԵՆԸ | | | 150 օրացուցային օր |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

Արմավիրի համայնքապետարան
Ք. Արմավիր, Հանրապետության 32
ՀՀ Ֆինանսների նախարարություն
Հ/Հ 900332371039
ՀՎՀՀ 04401882

Համայնքի ղեկավար
Կ.Տ.

**ԿԱՊԱԼԱՌՈՒ**

Վահագն և Սամվել ՍՊԸ
ՀՀ, ք.Երևան , Շիրակի 47/3
Բանկ՝ ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ ՓԲԸ
Հ/Հ 11500045075035
ՀՎՀՀ 01529053

Տնօրեն
Կ.Տ.

*** Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա <<Ակիզբը>> սյունակում ժամկետի սկիզբը նշվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրը.*

*Հավելված N 3*
*,28 հուլիսի 2020թ. կնքված*
*ԱՔ-ՀԲՄԱՇՁԲ-20/1 ծածկագրով պայմանագրի*

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Աշխատանքի | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020թ-ին ըստ ամիսների, այդ թվում** | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 45231187 | Արմավիրի մարզի Արմավիր քաղաքի Աբովյան 139 բ/բ շենքից Բաղրամյան 25 բ/բ շենքերի միջև գտնվող միջբակային ճանապարհի և բակային տարածքի բարեկարգման աշխատանքներ | | | | | | | | | | | | | 100 % |

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով: Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:*
*** հրավերում գումարները նշվում են տոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս տոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ*

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

Արմավիրի համայնքապետարան
Ք. Արմավիր, Հանրապետության 32
ՀՀ Ֆինանսների նախարարություն
Հ/Հ 900332371039
ՀՎՀՀ 04401882

ստորագրություն
Կ.Տ.

**ԿԱՊԱԼԱՌՈՒ**

,Վահագն և Սամվել ՍՊԸ
ՀՀ, ք.Երևան , Շիրակի 47/3
Բանկ՝ ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ ՓԲԸ
Հ/Հ 115004675035
ՀՎՀՀ 01528053

ստորագրություն
Կ.Տ.

*Հավելված թիվ 4*
*«28» հուլիսի 2020թ. կնքված*
*ԱՔ-ՀԲՄԱՇՁԲ-20/1 ծածկագրով պայմանագրի*

Պայմանագրի կողմ
________________________________
________________________________
գտնվելու վայրը ________________
ՀՀ ____________________________
ՀՎՀՀ __________________________

Պատվիրատու
________________________________
________________________________
գտնվելու վայրը ________________
ՀՀ ____________________________
ՀՎՀՀ __________________________

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
## ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

*«    » «            » 20   թ.*

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
________________________________________________________________
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «__________________» 20 թ.
Պայմանագրի համարը՝ __________
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ «    » «            » 20   թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

| N | Կատարված աշխատանքների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են։

Աշխատանքը հանձնեց
________________________________
ստորագրություն
________________________________
ազգանուն, անուն
Կ.Տ.

Աշխատանքը ընդունեց
________________________________
ստորագրություն
________________________________
ազգանուն, անուն
Կ.Տ.

*Հավելված 4.1*
*«28» հուլիսի 2020թ. կնքված*
*ԱՔ-ՀԲՄԱՇՁԲ-20/1 ծածկագրով պայմանագրի*

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _______________-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և ___________-ի
Պատվիրատուի անունը Կապալառուի անունը
(այսուհետ՝ Կապալառու) միջև 20 թ. ___________________________-ին կնքված N _____________________
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կապալառուն 20 թ. _________-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

| Աշխատանքի | | |
|---|---|---|
| անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

КՈՂՄԵՐԸ

**Հանձնեց**

**Ընդունեց**
հայտը նախագծած ներկայացուցիչ

_____________________
ազգանուն, անուն
_____________________
ստորագրություն

_____________________
ազգանուն, անուն
_____________________
ստորագրություն